ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/06

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Էֆբիէյ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21732-2021 գրությամբ «Էֆբիէյ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 28.12.2021թ.-ի թիվ 09/3232 գրության հիման վրա, 04.01.2022թ.-ին «Էֆբիէյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 04.01.2022թ.-ին:

05.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/06 համարի ծածկագիրը:

14.01.2022թ.-ին և 03.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.02.2022թ.-ին:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 28.12.2021թ. թիվ 09/3232 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2021 թվականի նոյեմբերի 15-ին «Երևանի Մխիթար մերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ համալսարան/ կողմից հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ապրանքների գնման ընթացակարգ: Ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «էֆբիէյ» ՍՊ ընկերությունը:

Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 24-ի 3-րդ նիստի 4-րդ որոշման 3-րդ կետով «էֆբիէյ» ՍՊ ընկերությանն առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի քարտուղարն այդ մասին նոյեմբերի 24-ին էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «էֆբիէյ» ՍՊ ընկերությունը կատարել է որոշակի շտկումներ, սակայն շտկման արդյունքում ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի գնահատման նիստ չի հրավիրվել, քանի որ 25.11.2021թ. «Լեյկո» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բողոքի հիման վրա վարույթ է ընդունվել «ԳԲՔԱ-ԼՕ-2021/109» ծածկագրով բողոք, ինչի մասին համալսարանը ծանուցվել է 26.11.2021թ.-ին: Փոխարենը 29.11.2021 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատման նիստը կասեցվել է մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերների 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները՝ «ԷԱՃԱՊՁԲ-2021/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2021թ. 5-րդ նիստի 2-րդ որոշմամբ մերժվել են «էֆբիէյ» ՍՊ ընկերության հայտով ներկայացված 30-րդ, 32-րդ, 45-րդ և 47-րդ չափաբաժնները հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

«էֆբիէյ» ՍՊ ընկերության տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի խնդրահարույց չափաբաժինների գնումների պլանում ներառված լինելու փաստն ապացուցող քաղվածքը, հրավերի տեխնիկական բնութագրերը պարունակող քաղվածքները /ամբողջական հրավերը տեղադրված է www.gnumner.am և www.eauction.armeps.am կայքերում/, «էֆբիէյ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած սկզբնական և շտկված հայտերի արտատպումները էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգից, ընթացակարգի արձանագրությունների պատճենները, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի ծանուցումը բողոքը վարույթ ընդունելու մասին և բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշումը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով

հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էֆբիէյ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 17.01.2022թ.-ին ներկայացրած թիվ 09/46 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ձեզ ենք ներկայացնում «Էֆբիէյ» ՍՊ ընկերության կողմից 14.01.2022թ. Ձեզ ուղղված գրության վերաբերյալ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ Համալսարան/ գրավոր կարծիքը:

Նախ անդրադառնանք շտկման մասին ծանուցման չստացմանը:

2021 թվականի նոյեմբերի 24-ին «Էֆբիէյ» ՍՊ ընկերությունը պատշաճ ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունների մասին և՛ էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետև՝ Համակարգ) միջոցով յուրաքանչյուր խնդրահարույց չափաբաժնի համար առանձին-առանձին, և՛ համակարգում կցված արձանագրության մեջ: Քանի որ համալսարանը չէր կանխատեսել շտկումը չստանալու հնարավորությունը, համակարգից արտատպումներ չեն արվել, սակայն շտկումների մասին ծանուցման ուղարկված լինելու փաստը, ինչպես նաև ծանուցման բովանդակության մասին տեղեկատվությունը կարող է տրամադրել Համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող լիազոր մարմինը:

Ինչ վերաբերվում է «Էֆբիէյ» ՍՊ ընկերության և նրա «ածանցյալ» հանդիսացող մի շարք ընկերությունների որդեգրած քաղաքականությանն այն մասին, որ ինչ-որ «միստիկ» պատահականությամբ միայն իրենց ընկերությունները չեն ստանում շտկման ծանուցումները ու ինչ-որ «միստիկ» գուշակությամբ անընդհատ կատարում են հրավերի պահանջներին չբավարարող շտկումներ, ապա դա առնվազն զավեշտալի է:

2021 թվականի նոյեմբերի 24-ին գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով մինչև նոյեմբերի 26-ը: Կասեցման այդ ժամկետը սահմանվում է ավտոմատ կերպով համակարգի կողմից և պատվիրատուն որևէ կերպ չի կարող ազդել այդ ժամկետի կրճատման կամ երկարացման վրա: Հետևապես գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը պետք է կայանար ամենաշուտը նոյեմբերի 26-ին, բայց քանի որ Համալսարանը բանավոր տեղեկացված էր բողոքի առկայության մասին, իսկ բողոքի վերաբերյալ պաշտոնական տեղեկացումը ստացվել է միայն նոյեմբերի 26-ին ժամը 16:26-ին, գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրվել է նոյեմբերի 29-ին 09:30 ին /նոյեմբերի 27-ը և 28-ը համապատասխանաբար շաբաթ և կիրակի ոչ աշխատանքային օրեր են/, որով

և կասեցվել է գնման ընթացակարգը մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը:

Այժմ անդրադառնանք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին 6-րդ կետով ի հայտ եկած հիմքերին:

«ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի կասեցված նիստը շարունակվել է միայն դեկտեմբերի 27-ին, որով էլ մերժվել են «էֆբիէյ» ՍՊ ընկերության 30-րդ, 32 րդ, 45-րդ և 47-րդ չափաբաժինները և գնման ընթացակարգն այդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

Հետևապես, պահպանելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահաջները, Համալսարանը դեկտեմբերի 28-ին «էֆբիէյ» ՍՊ ընկերության տվալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել է ֆինանսների նախարարություն:

Վերոգրյալով պայմանավորված խնդրում ենք «էֆբիէյ» ՍՊ ընկերությանը ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում /թեպետ տեղեկացված ենք, որ 07.01.2022թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի թիվ «ՍՑ-ՆԳ-2021/321» որոշմամբ «էֆբիէյ» ՍՊ ընկերությունն երկու տարի ժամկետով արդեն ներառվել է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում/:»:

3. <u>«Էֆբիէյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.12.2021թ.-ի գրությամբ դիմել է «էֆբիէյ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21732-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

14.01.2022թ.-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««էֆ Բի էյ» ՍՊԸ-ն մասնակցել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարած թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և eauction.armeps.am համակարգով ներկայացրել է հայտ:

ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկած իր գրության մեջ պատվիրատուն նշում է, որ 2021թ.-ի նոյեմբերի 24-ին հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի միջոցով ուղարկել է մեր կազմակերպության շտկման պահանջ:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ մեր կազմակերպության էլեկտրոնային փոստին՝ fba.llc@mail.ru ոչ մի շտկման պահանջի վերաբերյալ ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին չի ստացվել: Շտկման պահանջի չստացման պատճառների մասին որևէ մեկնաբանություն տալ չենք կարող:

Մեր աշխատակցի կողմից շտկումներ eauction.armeps.am համակարգով արվել են, որովհետև նկատել է որ, որ տվյալ բաժինը բաց է եղել մեր համար:

Բացի այդ, ինչպես պատվիրատուն է նշում իր 24.11.2021թ-ի թիվ 3 արձանագրության 6-րդ կետում՝

.... Հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգի նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները, այսինքն մինչև 25.11.2021թ-ի օրվա ավարտը: Հետևաբար գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը պետք է տեղի ունենար 26.11.2021թ-ին՝ ուրբաթ օրը:

Սակայն Պատվիրատուն «Լեյկո» ՍՊԸ-ի բողոքի հետ կապված ընթացակարգը դադարացրել է միայն նոյեմբերի 29-ին, ինչպես հրապարակած է տեղեկագրում՝

Ծածկագիր-ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ

Բաժին-Հանձնաժողովի նիստերի արձանագրություններ՝

ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ նիստի արձանագրությունը

(Հրապարակված է 2021-11-29 16:56:32-ից անժամկետ)

Բացի այն, «Լեյկո» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է նոյեմբերի 26-ին միայն ժամը 16:21-ին՝ ստորև քաղվածք տեղեկագրից

Ծածկագիր-ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ,

Բաժին-2021 թվական

Հայտարարությունն «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

(Հրապարակված է 2021-1 1-26 16:21:53-ից անժամկետ)

Այսինքն պատվիրատուի համար Գնումների մասին ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը ի հայտ են եկել նոյեմբերի 26-ին /կրկնում ենք՝ պատվիրատուն դադարեցրել է ընթացակարգը միայն նոյեմբերի 29-ին /և համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 45-րդ կետի պետք է նոյեմբերի 26-ից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկեր լիազորված մարմնին:

45. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տփալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Մասնակիցը բողոքներ քննող անձին խնդրել է չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «էֆբիէյ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2022/06 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 15.11.2021թ.-ին հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էֆբիէյ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի

հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.11.2021թ.-ին նիստի թիվ 3 արձանագրության 4.3-րդ կետի համաձայն՝ «էֆբիէյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հավելված 1.2-ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, անհրաժեշտ է ներկայացնել: 30-րդ, 32-րդ, 45-րդ և 47-րդ չափարաժինների համար անհրաժեշտ է ներկայացնել տեխնիկական բնութագիր /տեխնիկական բնութագրի փոխարեն ներկայացված է ապրանքի անվանումը/, ներկայացնել նաև ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները /ներկայացված են մի քանի երկրների անվանումներ, որոնց ներկայացման պահանջը հրավերով սահմանված չէր/:

v. Նույն արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «էֆբիէյ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 24.11.2021թ.-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ e-auction համակարգի միջոցով ծանուցում է ուղարկվել Մասնակցի fba.llc@mail.ru էլ. փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովի 29.11.2021թ.-ին նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի 26.11.2021թ.-ի «Լեյկո» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բողոքի հիման վրա «ԳԲՔԱ-ԼՕ-2021/109» ծածկագրով վարույթ սկսելու մասին գրությամբ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասով, որոշել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը կասեցնել՝ մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը:

viii. Հանձնաժողովի 27.12.2021թ.-ին նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41-րդ կետով և հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները, արձանագրել է, որ «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով և հանձնաժողովի քարտուղարն այդ մասին նոյեմբերի 24-ին էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի միջոցով ծանուցել է մասնակիցներին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ առաջնորդվելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի 26.11.2021թ.-ի «Լեյկո» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բողոքի հիման վրա «ԳԲՔԱ-ԼՕ-2021/109» ծածկագրով վարույթ սկսելու մասին գրությամբ, «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատման նիստ չի հրավիրվել, այլ 29.11.2021թ.-ին «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստը կասեցրել էր մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը, իսկ Հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում «էֆբիէյ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունների մի մասը, մասնավորապես՝ ներկայացրել է տեխնիկական բնութագրեր, սակայն ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին համապատասխան չի ներկայացվել ապրանքային նշաններ, ինչպես նշված էր 3-րդ արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետում և պահանջված էր էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգում: Արդյունքում՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները, որոշել է մերժել «էֆբիէյ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած 30-րդ, 32-րդ, 45-րդ և 47-րդ չափաբաժինները՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21732-2021 գրությամբ «էֆբիէյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները…:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 15.11.2021թ.-ին հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ

իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 15.11.2021թ.-ին հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.11.2021թ.-ին նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «էֆբիէյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հավելված 1.2-ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, անհրաժեշտ է ներկայացնել: 30-րդ, 32-րդ, 45-րդ և 47-րդ չափարաժինների համար անհրաժեշտ է ներկայացնել տեխնիկական բնութագիր /տեխնիկական բնութագրի փոխարեն ներկայացված է ապրանքի անվանումը/, ներկայացնել նաև ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները /ներկայացված են մի քանի երկրների անվանումներ, որոնց ներկայացման պահանջը հրավերով սահմանված չէր/, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «էֆբիէյ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի քարտուղարի կողմից 24.11.2021թ.-ին անհամապատասխանությունների

շտկման վերաբերյալ e-auction համակարգի միջոցով ծանուցում է ուղարկվել Մասնակցի fba.llc@mail.ru էլ. փոստի հասցեին:

Հանձնաժողովի 29.11.2021թ.-ին նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի 26.11.2021թ. «Լեյկո» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բողոքի հիման վրա «ԳԲՔԱ-ԼՕ-2021/109» ծածկագրով վարույթ սկսելու մասին գրությամբ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասով, որոշել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը կասեցնել՝ մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը:

Հանձնաժողովի 27.12.2021թ.-ին նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի 26.11.2021թ. «Լեյկո» ՍՊ ընկերության կողմից ներկայացվւսծ բողոքի հիման վրա «ԳԲՔԱ-ԼՕ-2021/109» ծածկագրով վարույթ սկսելու մասին գրությամբ, «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատման նիստ չի հրավիրվել, այլ 29.11.2021թ. «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստը կասեցրել էր մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը, արձանագրել է, որ սահմանված ժամկետում «էֆբիէյ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունների մի մասը, մասնավորապես՝ ներկայացրել է տեխնիկական բնութագրեր, սակայն ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին համապատասխան չի ներկայացվել ապրանքային նշաններ, ինչպես նշված էր 3-րդ արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետում և պահանջված էր էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգում: Արդյունքում՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «էֆբիէյ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած 30-րդ, 32-րդ, 45-րդ և 47-րդ չափաբաժինները հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «էֆբիէյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է հավելված 1.2-ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, ինչպես նաև 30-րդ, 32-րդ, 45-րդ և 47-րդ չափարաժինների համար անհրաժեշտ է ներկայացնել տեխնիկական բնութագիր /տեխնիկական բնութագրի փոխարեն ներկայացված է ապրանքի անվանումը/, ներկայացնել նաև ապրանքային նշանը կամ նշանները և դրանց

համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները /ներկայացված են մի քանի երկրների անվանումներ, որոնց ներկայացման պահանջը հրավերով սահմանված չէր, իսկ որպես շտկում ներկայացված տեխնիկական բնութագրերում ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին համապատասխան չի ներկայացվել ապրանքային նշանները, որը Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության հիման վրա ենթակա էր շտկման (հստակեցման), ինչը Մասնակցի կողմից չի շտկվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Էֆբիէյ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-7-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության

իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21732-2021 գրությամբ «Էֆբիէյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/06 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էֆբիէյ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**